Հավելված N1

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի

մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՀՄԿ-ԳՀԱՊՁԲ-25/22

<<Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կետրոն>> ՊՈԱԿ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՄԿ-ԳՀԱՊՁԲ-25/22 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2025 թվականի հոկտեմբերի 15-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2025 թվականի հոկտեմբերի 16-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1՝ Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ի մասի պահանջների խնդրում ենք պաշտոնապես պարզաբանել, թե արդյո՞ք 4-րդ չափաբաժնով պահանջվող պրոյեկտորի տեխնիկական առաջադրանքում նշված 2 հատ VGA մուտքերը և շուտվանից նման սարքերում չօգտագործվող «S-video» մուտքը (*քանակը նշված չէ*) չեն հանդիսանում զուտ մեխանիկական վրիպակներ և բավարար կլինի, որ պրոյեկտորը ունենա 1 հատ VGA և առաջադրանքում թվարկված մնացած այլ բոլոր մուտքերը և ելքերը:

Պարզաբանում N 1՝ Ուսումնասիրելով թիվ 1 հարցադրման բովանդակությունը տեղեկացնում ենք Ձեզ, որ 4-րդ չափաբաժնով պահանջվող պրոյեկտորի տեխնիկական տվյալներում նշված 2 հատ VGA մուտքերը և «S-video» մուտքը չեն հանդիսանում մեխանիկական վրիպակներ և դրանց առկայությունը պարտադիր է:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՄԿ-ԳՀԱՊՁԲ-25/22 **ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Ա.Բուռնուչյանին:**
Հեռախոս՝ +374 96695902

Էլ. Փոստ՝ a.burnuchyan@gmail.com

ՀՄԿ-ԳՀԱՊՁԲ-25/22 **ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով:**

Պատվիրատու՝ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ